ՔԴՕ 108-րդ հոդվածի համաձայն. «1. Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում:

2. Գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:»:

ՔԴՕ 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Անդրադառնալով սույն գործով հատուցման ենթակա դատական ծախսերին, Դատարանն արձանագրում է, որ հայցի բավարարմամբ պայմանավորված դատա-կան ծախսերը պետք է կրի պատասխանող կողմը, մասնավորապես՝ պատասխա-նողից հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման 100000 ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումարը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-րդ հոդվածներով՝

ՎՃՌԵՑ

1. Հայցը բավարարել՝ Անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի թիվ ԵՔ-ԲՄԽԱԾՁԲ-26/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 11.11.2025 թվականի նիստի թիվ 4 արձանագրությամբ հավաստվող որոշումը, որպես հետևանք՝ անվավեր ճանաչել թիվ ԵՔ-ԲՄԽԱԾՁԲ-26/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 19.11.2025 թվականի նիստի թիվ 5 արձանագրությամբ հավաստվող ««Ի ՍԻ ԷՆԵՐՁԻ» ՍՊ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊ, ՄԱՅՐՈՒՂԻ Մ» ՍՊ և «Ճոնսու Կուոյոու» ճոպանուղային ինժեներական տեխնոլոգիաների ՍՊ (Beijing Zumsun Ropeway Engineering Technology Co., Ltd.) ընկերությունների կոնսորցիումի կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին» որոշումը, թիվ ԵՔ-ԲՄԽԱԾՁԲ-26/1 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը և պարտավորեցնել թիվ ԵՔ-ԲՄԽԱԾՁԲ-26/1 ծածկագրով գնման ընթացակարգում «Ի ՍԻ ԷՆԵՐՁԻ» ՍՊ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊ, ՄԱՅՐՈՒՂԻ Մ» ՍՊ և «Ճոնսու Կուոյոու» ճոպանուղային ինժեներական տեխնոլոգիաների ՍՊ (Beijing Zumsun Ropeway Engineering Technology Co., Ltd.) ընկերությունների կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

2. Պատասխանող Երևանի քաղաքապետարանից հօգուտ հայցվոր «Ի ՍԻ

ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-Ի բռնագանձել 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումար: Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռը կամովին չկատարելու դեպքում կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից՝ Պարտապանի հաշվին:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Մխեյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE56-F05C-49E2-9DDD հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am